Միքայել Պետրոսյան

ԿԱՄՐՋԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Սիմֆերոպոլ
2018

УДК 821(=1.479.25)
ББК 84(2Рос=Арм)
П 31

Одобрено Консультативным советом по изданию литературы на родных языках, выпущено при поддержке Государственного комитета по делам межнациональных отношений и депортированных граждан Республики Крым. Издано за счёт средств бюджета Республики Крым

П 31 **Петросян М. А.**
После полудня (За мостом): *стихи.* – Симферополь: ГАУ РК «Медиацентр им. И. Гаспринского», 2018. – 112 с. – На русском и армянском языках.

УДК 821(=1.479.25)
ISBN 978-5-906959-83-6 **ББК 84(2Рос=Арм)**

В книге Михаила Петросяна «После полудня» («За мостом») представлены стихи и притчи, четверостишия и афоризмы автора последних лет о родной земле и народе, его славном прошлом и трагических страницах, обнадеживающем настоящем, а также о светлом будущем.

Պետրոսյան Մ. Ա.
Պ 31 **Կեսօրից հետո (Կամրջից այն կողմ):** Բանաստեղծություններ: – Սիմֆերոպոլ. ՊԻՀ ՂՀ «Ի. Գասպրինսկու անվ. մեդիակենտրոն», 2018: – 112 էջ: – Հայերեն և ռուսերեն լեզուներով:

УДК 821(=1.479.25)
ISBN 978-5-906959-83-6 **ББК 84(2Рос=Арм)**

Միքայել Պետրոսյանի «Կեսօրից հետո» («Կամրջից այն կողմ») գրքում զետեղված են հեղինակի՝ վերջին տարիներին գրված բանաստեղծություններն ու առակները, քառյակներն ու աֆորիզմները հայրենի հողի և հարազատ ժողովրդի, նրա փառավոր անցյալի և ողբերգական էջերի, հուսադրող ներկայի և արևաշող ապագայի մասին:

ISBN 978-5-906959-83-6

© **Петросян М. А.,** 2018
© **ГАУ РК «Медиацентр им. И. Гаспринского»**, 2018

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

ՀԱՅՐԵՆԻՔԻ
ԿԱՐՈՏԸ ՍՐՏՈՒՄ

Միքայել Պետրոսյանի «Կամրջից այն կողմ» գիրքը նախորդ՝ «Կարոտը հեռվում է ծնվում» ժողովածուի օրգանական շարունակությունը լինի ասես: Այն նույնպես բազմաժանր է և բազմաբովանդակ, այստեղ զետեղված են մեծավաստակ գրողի՝ հիմնականում վերջին տարիներին գրված բանաստեղծություններն ու առակները, քառյակներն ու աֆորիզմները:

Ժողովածուում մի ստվար մաս են կազմում բազմաթեմա բանաստեղծությունները՝ հայրենի հողի և հարազատ ժողովրդի, նրա փառավոր անցյալի և ողբերգական էջերի, հուսադրող ներկայի և, որ ամենակարևորն է՝ արևաշող ապագայի մասին, քանզի բանաստեղծը հավատում է, որ.

Հայե՛ր, հայե՛ր, կգա օրը՝ էլ չեք ցրվի,
Ձեր մատները՝ բռունցքի պես Մեծ Միերի,
Իսկ քարտեզը՝ Տիգրան Մեծինը կլինի,
Գիրը՝ Մաշտոց, գերբը Մասիս սարը լինի:

Ճակատագրի բերումով՝ Մ. Պետրոսյանը

ГАУ РА "Национальная библиотека Армении им. Г. Гарегина Нжде"

վաղուց է հեռվում թողել հայրենի եզերքը՝ իր սիրելի Արցախը, որը հավերժ նվաճել է բանաստեղծի սիրտն իր ճերմակահեր լեռներով ու անդնդախոր ձորերով, փրփրաբաշ գետերով և զմրուխտյա անտառներով: Կարոտն է բույն հյուսել նրա հոգում՝ հայրենիքի կարոտը, որը կարմիր թելի պես՝ մեկ բացահայտ, մեկ քողարկված, անցնում է նրա բոլոր ստեղծագործություններով:

Ինչո՞ւ եմ սիրում ես այդ երկիրը,
Ուր քարից անգամ արյուն է ծորում,
Գուցե կարո՞տն է ամբողջ պատճառը,
Որ անգութ ճանկն է խրել իմ սրտում:
. . . . . .
Բայց ես խենթացած սիրահարի պես
Նրան եմ ձգտում կարոտով անտես,
Աշխարհից թանկ է այդ մի բուռ հողը,
Թեև չար բախտը ինձ հեռու նետեց:

Ինչ խոսք, հայրենիքի սիրուց և նրա կարոտից են ծնվել Մ. Պետրոսյանի՝ ղարաբաղյան հյութեղ բարբառով գրված խաղիկները, որոնք յուրահատուկ փայլ ու հնչեղություն ունեն՝ համեմված նուրբ երգիծանքով.

ГАУ РК "Национальная И. Гасанлинского"

Հրսանիք ա՝ տաշ ու տուշ,
Հարսնեն անունն ալ՝ Անուշ,
Ջահել փսեն աշկը լուս,
Իսկ չուզողի աշկը փուշ:

* * *

Մեր բարբառի խոսքը բարդ ա,
Տաշվող քար չի ու շատ սարթ ա,
Ղարաբաղցին բարի մարթ ա,
Բայց դուզյախա, կողքը հաստ ա:

Նմանություններով հանդերձ՝ «Կամրջից այն կողմ» գիրքը տարբերվում է իր նախորդից ոչ միայն նրանում զետեղված նոր ստեղծագործությունների թարմությամբ և այժմեականությամբ, այլ նաև որոշ անկումային տրամադրությունների առկայությամբ: Եվ զուր չէ, որ այս ժողովածուն կոչվում է «Կամրջից այն կողմ»: Ակնարկն առավել քան թափանցիկ է և հասկանալի, այն է՝ յոթանասունվեցը բոլորած բանաստեղծը ծերության մեջ լավ բան չի տեսնում, և ինչ-որ տեղ կարելի է համաձայնել նրա հետ…

ГАУ РК "Национальная б-ка им. И. Гаспринского"

Ա՛խ, ծերության մեջ էլ լավ բան չկա,
Սիրուց անհանգիստ մերժման ցավ չկա,
Մարդուն մաղթում են անհոգ ծերություն,
Բայց իրականում այն բնավ չկա:

Պետք է նշել, սակայն, որ նման տրամադրությունները հատկանշական չեն Մ. Պետրոսյանի ողջ ստեղծագործությանը և չեն վերածվում հոռետեսության, առավել ևս՝ ողբերգության: Կենսուրախ բանաստեղծը մնում է նույն՝ կյանքը սիրող և գնահատող մարդը, որը կարող է հրճվել իրեն շրջապատող ցանկացած գեղեցիկ բանով՝ անեղծ բնությամբ, մարդկային անկեղծ ու բարի հարաբերություններով: Մ. Պետրոսյանին մի առանձին բերկրանք են պատճառում գեղեցիկ բնապատկերները: Եվ պատահական չէ, որ նա հաճախ է անդրադառնում բնության թեմային, որն, իհարկե, ինքնանպատակ չէ: Նման ստեղծագործությունները մարդակային հոգիները գեղեցիկով դաստիարակելու, բարին սերմանելու ազնիվ նպատակ ունեն.

Ձեփյուռ փչեց սարի լանջից,
Մեղուն թռավ ծաղկի գրկից,
Խուտուտ տվեց գառան դունչը,

ГАУ РК "Национальная б-ка им. М. Горького"

Նրան կտրեց իր մոր կաթից:
Որտեղ գարնան պարտեզ բացվեց՝
Ծաղկափոշին խառնեց իրար.
Նշանվեցին ծառ ու ծաղիկ
Աշնան առատ բերքի համար:

Սերը տարիք չի հարցնում… Այս ծամծմված արտահայտության ճշմարտացիությունը մեկ անգամ ևս ապացուցում է Մ. Պետրոսյանը՝ սիրո հավերժական թեմային նվիրված իր ստեղծագործություններում.

Արի՛, արի՛, շո՛ւտ արի,
Իմ հույսերը մի՛ մարիր,
Անձրև լինի, թե արև,
Սիրող սիրտը կսպասի:

Արի՛, ինչպես գարնան ցող,
Քո կարոտից՝ շուրթս չոր,
Թող մազերիդ ես հպվեմ
Քնքո՛ւշ-քնքո՛ւշ, ինչպես հով:

Անկասելի է սիրո մեծ ուժը, նույնիսկ եթե տարիներ են անցել և թվում է, թե մոռացվել է նախկին սերը.

ГАУ РК "Национальная б-ка им. И. Гаспринского"

Կարծես չեմ սիրում, մոռացել եմ քեզ,
Բայց ինչո՞ւ, ասա, հազարների մեջ
Աչքերս քեզ են փնտրում մշտապես,
Ես քեզ չեմ կարող իմ սրտից հանել:

Կյանքի բովով անցած, հազար ցավ ու դարդ տեսած, հոգով և մարմնով թրծված ու իմաստացած բանաստեղծը տարիների բարձունքից փոքր-ինչ այլ հայացքով է նայում իրերին ու երևույթներին, այլ կերպ է ընկալում ժամանակն ու տարածությունը, մարդու դերն ու նշանակությունը կյանքում՝ հստակ զանազանելով բարին չարից՝ անվերապահորեն գերապատվությունը տալով առաջինին: Ահա սա է Պետրոսյան-բանաստեղծի, թերևս, կյանքի ամենակարևոր սկզբունքը.

Քեզ համար կյանքում միշտ բարին ընտրիր,
Չարը միշտ էլ կա, նրան մի փնտրիր,
Բարի լինելով՝ չարին կհաղթես,
Նրա գրավիչ տեսքով մի տարվիր:

Տարված հայրենի եզերքով՝ Մ. Պետրոսյանը, սակայն, չի կարող չհիանալ դրախտային Ղրիմով, որն արդեն վաղուց դարձել է բանաստեղծի

ГАУ РК "Национальная библиотека им. М. Горького"

երկրորդ հայրենիքը և նրա բանաստեղծական ներշնչման աղբյուրներից մեկը: Ահա ղրիմյան թեմային նվիրված գործերից մեկը՝ «Ծովափին» բանաստեղծությունը.

Նորից կանգնած եմ ահա ծովափին.
– Քո չքնաղ տեսքի գերին եմ, Սև ծով:
Սիմեզում եմ տրվել հուշերին,
Հայացքս ծովին՝ հեռու եմ մտքով:

Պոետ չլինես՝ անշուշտ կդառնաս,
Այս չքնաղ տեսքով ինչպե՞ս չհիանաս:
Ալիքն է զարկվում ժայռոտ ափերին,
Մտքերս շեղում, անում է մաս-մաս:

Ինչպես և «Կարոտը հեռվում է ծնվում» ժողովածուում, այս գրքում նույնպես մեծ թիվ են կազմում քառյակները: Ընդամենը չորս տողում բանաստեղծը կարողանում է ամփոփել որևէ միտք՝ հասցնելով այն փիլիսոփայության աստիճանի.

Ո՛չ ծնվելն է քո կամքով,
Ո՛չ՝ գնալն այս աշխարհից,
Հարուստ լինես, թե աղքատ՝
Մարդ ապրելն է քո կամքով:

ГАУ РК "Национальная б-ка им. И. Гаспринского"

Ժողովածուում զետեղված են Մ. Պետրոսյանի՝ վերջին տարիներին գրված աֆորիզմները, որոնք մի առանձին փայլ են հաղորդում նրա ստեղծագործությանը: Ելակետ ունենալով կյանքի մեծ փորձը, իրերի և երևույթների մեջ թափանցելու, դրանք վերլուծելու ունակությունը, բանաստեղծը թևավոր խոսքը վերածում է խրատաբարոյական քառյակի, որը կարելի է համարել նաև ավագ ընկերոջ խորհուրդ.

Կատակը պիտ լինի տեղին,
Որ չկպչի ցավոտ տեղին,
Չես ճանաչում դիմացինիդ՝
Խոսքը պահիր լեզվիդ տակին:

* * *

Երբ երիտասարդ ես, տարվում ես երազանքներով, իսկ երբ ծերանում ես, երազանքները փոխարինվում են հուշերով:

Երբեմն տարված անցյալի հուշերով՝ Մ. Պետրոսյանը, սակայն, հոգով մնում է երիտասարդ, արարում է նույն պատանեկան ավյունով, ինչպես տասնամյակներ առաջ՝ ստեղծելով արտաքինից պարզ ու անպաճույճ,

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

արհեստական էֆեկտներից զուրկ, սակայն բոլորին հասկանալի, խորիմաստ բովանդակություն ունեցող պոեզիա՝ համակված կենսուրախությամբ և լավատեսությամբ:

Ավարտելով մեր խոսքը՝ Միքայել Պետրոսյանին՝ մեր ավագ ընկերոջն ու գրչակցին ցանկանում ենք կովկասյան երկարակեցություն, ստեղծագործական անսպառ եռանդ ու երկար ուղի: Հուսով ենք, որ Մ. Պետրոսյանն ապագայում ևս կուրախացնի գրականության սիրահարներին և ղրիմահայ պոեզիան կհամալրի նոր ստեղծագործություններով:

Ռուշան Փիլոսյան

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կամրջից այն կողմ

Կամրջից այն կողմ մեծ պապիս տունն է,
Ձորում հոսողն էլ մեր հալալ ջուրն է,
Գետի ափին էլ ջրաղացն է հին,
Որի հիմքերը սարի պես պինդ են:

Կամրջից այն կողմ հիմա սահմանն է,
Իսկ պահապանը մեր հայ զինվորն է,
Ցավո՛ք, այն կողմում մեր Շահումյանն է,
Իսկ մեղավորը նենգ հարևանն է:

Կամրջից այն կողմ՝ մեծ պապիս տանը,
Հիմնովին փոխվեց իմ կյանքի հունը,
Ուր էլ որ գնամ մտքիս կամրջով,
Իրար եմ կապում ներկան ու հինը:

Որքան կարող եք՝ նորը կառուցեք,
Բայց հին կամուրջը երբեք չքանդեք,
Որ զուլալ մնա Թարթառի ջուրը,
Այնտեղ չթողնեք թշնամու ոտքը:

ГАУ РК "Национальная б-ка им. И. Насыринского"

Ծովափին

Նորից կանգնած եմ ահա ծովափին.
– Քո չքնաղ տեսքի գերին եմ, Սև ծով:
Սիմեզում եմ տրվել հուշերին,
Հայացքս ծովին՝ հեռու եմ մտքով:

Պոետ չլինես՝ անշուշտ կդառնաս,
Այս չքնաղ տեսքով ինչպե՞ս չհիանաս:
Ալիքն է զարկվում ժայռոտ ափերին,
Մտքերս շեղում, անում է մաս-մաս:

Ծովը սխալներ չի ներում երբեք.
– Անփորձ լողորդնե՛ր, դուք զգո՛ւյշ եղեք,
Այն, ինչ ցամաքում կարող է ներվել,
Ծովում կարող եք կյանքով հատուցել:

Ծովը քամուց է հրաման առնում,
Գժված, փրփրած քարերն է լիզում,
Նա գեղեցիկ է իր խենթության մեջ,
Եթե ափին ես՝ ոչ նրա գրկում:

ГАУ РК "Республиканская библиотека им. М. Горького"

Հիշեցի նորից Մեծ հայորդուն այն,
Որ ծովի մեջ էր գտել բնորդին,
Նրա «Իններորդ ալքը» ցասման
Հայի բողոքն է ընդդեմ աշխարհի:

Ծովափնյա ժայռին թառած ճայերը
Կարծես զարմացած հարցնում են իրար.
– Որտեղի՞ց եկավ այս անծանոթը,
Որ խզմզում է՝ թուղթ, գրիչ առած:

Եվ ալիքները՝ իրար փեշ բռնած,
Զարկվում են ժայռին՝ կաթիլներ դարձած,
Քամուց խելագար՝ թռչում են վերև,
Ինչպես պատանի՝ մեծ սիրուց արբած:

24.12.14.

ГАУ РК "Медиацентр им. И. Гасринского"

Ինչո՞ւ

Ինչո՞ւ եմ սիրում ես այդ երկիրը,
Ուր դառն է եղել իմ մանկությունը,
Ուր լավ օրերը այնքա՛ն քիչ էին,
Որ մեկ-մեկ գիտեմ նրանց հաշիվը:

Ուր հայրս ծանր բեռով տուն չեկավ,
Դեմքս չտեսավ, չառավ գիրկը իր,
Նրանից մնաց մի լուսանկար,
Մնաց մի նամակ՝ ռազմաճակատից:

Հավատում էի սուտ երազներին,
Սովորում էի՝ գրքերին տրված,
Սինձ ու մրգերով փորս կշտացրած՝
Ձիլ երգում էի. «Փա՛ռք հայրենիքին»:

Բայց ինչ էլ լինի, սիրում եմ անչափ
Այդ հողն ու ջուրը կյանքից առավել,
Ես աքսորված եմ զգում ինձ հիմա,
Քանզի հեռու եմ՝ իմ կամքից անկախ:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

Պատճառը, գուցե, այն խենթ օրերն են,
Երբ սերը բացեց սրտիս դռները,
Կամ էլ աղբյուրի սառնորակ ջուրն էր,
Հրաշք լեռները, մեր անտառները:

Դեռ օրորոցից իմ մանուկ հոգում
Մաղձ էր կուտակվում դառնությունից ծով,
Բայց իմ մեջ երբեք չդարձավ այն թույն –
Կյանքս մաքրվեց սիրո մեծ ուժով:

Ինչո՞ւ եմ սիրում ես այդ երկիրը,
Ուր քարից անգամ արյուն է ծորում,
Գուցե կարո՞տն է ամբողջ պատճառը,
Որ անգութ ճանկն է խրել իմ սրտում:

Դեռ անհիշելի ժամանակներում
Մեր ոտքի տակի հողը քանդեցին,
Մոլուցքով բռնված քոչվոր ցեղերը
Հայերի հետքը ջնջել ուզեցին:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

Շատ կրակ մարվեց հայի օջախում,
Բայց անթեղված էր կրակը մնում,
Նորից ու նորից դարերի խորքից
Ժայթքում էր լավան ու հրդեհ դառնում:

Եվ վրա հասավ հատուցման ժամը,
Հայ քաջ զինվորն իր նժույգը թամբեց,
Ոտքի տակ տվեց կեղծիքն ու սուտը,
Երբ համբերության բաժակը լցվեց:

Ինչո՞ւ եմ սիրում ես այդ երկիրը,
Երբ այն հեղեղում քանդվեց իմ տունը,
Երբ դարձա ես էլ մի նոր գաղթական,
Ու փլվեց, ցրվեց իմ խաղաղ հույսը:

Սատանան հառնեց երկրի ընդերքից
Ու հազարավոր կյանք խլեց մեզնից,
Բայց համառ, անհաշտ կամքը հայերի
Դիմացավ նաև այդ նոր հարվածին:

ГАУ РК "Национальная библиотека им. Х. Аспринского"

Հիմա երբ հեռվից անցյալն եմ հիշում,
Ինձ հայրենիքից զրկված եմ զգում,
Նոր սերունդներ են այնտեղ մեծանում,
Երևի ինձ էլ քչերն են հիշում:

Ինչո՞ւ եմ սիրում ես այդ երկիրը,
Ուր չեն ընթերցում իմ գրվածքները,
Որոնք բոլորը նրանց մասին են՝
Մեր ապ ու պապից մինչև նորերը:

Բայց ես՝ խենթացած սիրահարի պես,
Նրան եմ ձգտում կարոտով անտես,
Աշխարհից թանկ է այդ մի բուռ հողը,
Թեև չար բախտը ինձ հեռու նետեց:

24.12.14.

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Մի աղբյուր կար

Երազումս մեր աղբյուրը
Տխուր, մենակ լաց էր լինում,
Ինչպես եղնիկ ձագակորույս՝
Աչքից արցունք էր կաթկթում:

Քչքչում էր, ծորում բարակ,
Կորչում մամռոտ քարերի տակ,
Անտակ սափորս կարոտի,
Ա՜խ, չի լցվում գոնե մի կաթ:

Կանաչ մամուռ՝ գուռի շուրթին,
Վայրի դաղձը՝ առվի ափին,
Իսկ թևազարդ թիթեռները
Խենթ շուրջպար են բռնել վերջին:

Ինձ թվաց, թե նրա ափին
Ծարավ չոքել եմ ես կրկին,
Երբ արթնացա, սակայն, քնից,
Աղի կաթիլ տեսա բարձիս:

24.12.14.

ГАУ РК "Национальная им. И. Гаспринского"

Գարնան զեփյուռ

Զեփյուռ փչեց սարի լանջից,
Մեղուն թռավ ծաղկի գրկից,
Խուտուտ տվեց գառան դունչը,
Նրան կտրեց իր մոր կաթից:

Որտեղ գարնան պարտեզ բացվեց՝
Ծաղկափոշին խառնեց իրար.
Նշանվեցին ծառ ու ծաղիկ
Աշնան առատ բերքի համար:

Մառախուղը ցրվեց դաշտում,
Ծիլը ժպտաց մոր բարուրում,
Երբ ջերմացավ լեռան թուշը,
Ձյունը հալվեց հողի ծոցում:

Մի խենթ ջահել՝ սիրուց վառված,
Ձնծաղիկի փունջը գրկած
Սպասում է իր սիրածին՝
Երազների նժույգ հեծած:

08.01.15

ГАУ РК "Национальная библиотека им. В. Г. Распутина"

Նոր տարի

Ահա ևս մի էջ շրջվեց,
Երեկվա օրն անցյալ դարձավ,
Ես մեկ տարով էլ ծերացա,
Մի նոր ցերեկ նորից բացվեց:

Անցած տարին ցավոտ էր շատ,
Կորցրի մարդկանց իմ հարազատ,
Վերջին ժամին ես չհասա,
Ի՞նչ անեի՝ հեռու էր շատ:

Լացե՞մ, թե՞ ոչ՝ օգուտ չկա,
Չորացել է արտասուքը,
Սև էր էջը իմ այդ տարվա.
Հարազատից մնաց հուշը:

Բայց մի նոր էջ ես բացեցի,
Ուր անհայտն է լուռ ծվարել,
Թող այդ էջում միշտ լույս լինի,
Պետք է միայն լավին սպասել:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

Բարո՛վ դու գաս, ա՛յ Նոր տարի,
Թող որ կորուստ էլ չլինի,
Խաղաղ լինի մեր երկիրը,
Թող ոչ մեկը «վա՛յ» չկանչի:

Դալար մնա ծառիս բունը,
Կողքիս լինի սիրած կինը,
Թող որ աճեն մեր ճյուղերը,
Տերև չընկնի մեր դռանը:

Ինչ վերքեր կան, թող որ փակվեն,
Աստված թոռներիս պահպանի,
Թող լույս բացվի մթության մեջ,
Կյանքը վայելք մեզ պարգևի:

Խաղաղություն իմ հին ազգին,
Որտեղ հայ կա՝ թող ողջ լինի,
Մի օր ձեր տանը հավաքվեք,
Էլ թշնամի թող չտեսնեք:

01. 01.15

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

Ձմեռ

Դրսում բուքն է մոլեգնում,
Ամռան մուռն է նա հանում,
Որ չսառչի սերմը հողում՝
Ճերմակ վերմակ է փռում:

Ձյունով ծածկված դաշտերում
Ծիկրակում է, ծիծաղում,
Լույսի շողեր գողացած՝
Թակարդներ է նա լարում:

Նստում ծառի ճյուղերին,
Քշում սոված ագռավին,
Որ չորացած պտուղ է
Փնտրում դատարկ ճյուղերին:

Ջերմությունից կաթկթում,
Սառչում, սրինգ է դառնում,
Կախվում քթից տանիքի
Ու մեծ վտանգ է դառնում:

ГАУ РК "Национальная им. И. Гаспринского"

Զույնն ու քամին միասին
Ինչեր ասես չեն անի,
«Վայը» եկավ ճամփորդի,
Թե որ նրանց պատահի:

Բայց առանց ձյուն՝ ի՞նչ ձմեռ,
Ախր տխուր կլիներ,
Եթե ձմեռ չլինի,
Չի գա ամառը նորից:

10.01.15

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Հերոս տղաներ

Հորս՝ Արամ Պետրոսյանի հիշատակին

Ծերացել եք դուք, մեր հերոս տղերք,
Ու տարիները, ալիք առ ալիք,
Ձեր քաջ դեմքերն են հաճախ ակոսել,
Ցավո՛ք, նոսրացան շարքերը ձեր ձիգ:

Դուք ջահե՛լ տղերք՝ բեղը նոր ծլած,
Ձեզնից շատերը դեռ համբույր չառած՝
Մայրեր թողեցին՝ աչքը ձեր ճամփին,
Ու որբե՛ր, որբե՛ր՝ դեռ հայրիկ չասած:

Դաժան թշնամին երկիր էր մտել,
Սատանան էր ժանտ հոգում բույն դրել,
Իսկ հին ոսոխը՝ սահմանին կանգնած,
Սպասում էր նա ժանիքը սրած:

Ելաք դուք, ինչպես պատնեշ հողմի դեմ,
Ու հերոսացաք օտար հողերում,
Բազմագլխանի հրեշին դարի
Ծնկի բերեցիք իր նսեմ որջում:

ГАУ РК "Национальная библиотека им. М. Распринского"

Բայց ինձ պես ինչքա՛ն որբեր մնացին,
Քանի՛ խեղճ մայրեր լացից կուրացան,
Ձեզնից շատերը՝ հայտնի, թե անհայտ,
Գյուղ ու քաղաքում լուռ արձան դարձան:

Սրտիս մեջ ցավն է ոռնում զայրագին,
Երբ խիղճը կորցրած ինչ-որ խառնածին
Ձնչին գներով ձեր պարգևներն է
Առնում, վաճառում՝ փռած մայթերին:

Այսօր մեծ տոն է՝ Ինը մայիսի,
Ով որ խիղճ ունի, դա պետք է հիշի,
Աշխարհի համար՝ Մեծ Հայրենական,
Իսկ հայի համար՝ Բեռլին ու Շուշի:

Ծերացել եք դուք, մեր հերոս տղերք,
Ձեր խրոխտ քայլքը այլևս չունեք,
Փույթ չէ, թե կգա անխուսափելին,
Բայց հավատացեք՝ դուք էլ մահ չունեք:

Հա՛յր իմ, դու օտար հողում մնացիր,
Ինձանից «հայրիկ» բառը չլսեցիր.
Մենք՝ երեք որբեր, մեծացանք մի կերպ,
Մեր անձնագրում, սրտում մնացիր:

ГАУ РК "Национальная библиотека им. Гаспринского"

Քչերն են մնացել քո ընկերներից,
Որոք փրկվեցին մահվան ճանկերից,
Ու ամեն անգամ նրանց տեսնելիս՝
Ասես վերջապես ինձ մոտ ես գալիս:

05.05.14

Ա՛խ, այդ սեռը

Ա՛խ, այդ սեռը, կանանց սեռը,
Տղամարդկանց սրտի եռը,
Թույլ ուսերին՝ ողջ տան բեռը,
Մեր տան հացի սուրբ մերանը:

Ա՛խ, այդ սեռը, այդ թույլ սեռը,
Տղամարդկանց սրտի սերը,
Որ լավ գիտի մեր թույլ տեղը,
Միշտ զգում է չար վտանգը:

Ա՛խ այդ սեռը, այդ թույլ սեռը.
Կյանք արարող, օրհնող ձեռքը,
Ներում է միշտ մեղքը որդու,
Իր ծուռ բախտից չի տրտնջում:

ГАУ РК "Медиатека им. И. Гаспринского"

Ա՛խ, այդ սեռը, այդ թույլ սեռը,
Տղամարդու սերն ու ցավը,
Հսկաներին ծալող ուժը,
Մեր օջախի անմար ծուխը:

Ա՛խ, այդ սեռը, այդ թույլ սեռը,
Որից թույլ են գազանները,
Թե վտանգվեն զավակները,
Նա կփշրի կապանքները:

Ա՛խ, այդ սեռը, այդ թույլ սեռը.
Նրա կողքին ի՞նչ է լեռը,
Բայց քնքուշ է նրա սերը,
Ինչպես վարդի նուրբ թերթերը:

Ա՛խ, այդ սեռը՝ մայրիկ կոչվող,
Աստված ծնող, կյանք արարող,
Մեզ այնպիսի պարտք է տվել,
Որ այն մարել չենք էլ կարող:

10. 06.15

ГАУ РК "Национальная б-ка им. И. Гаспринского"

Աքսենյային

Ծննդյան օրվա առթիվ

Երեկ թռվռուն, սիրուն մի աղջիկ,
Մանուշակների բույրերի փնջիկ,
Իսկ այժմ՝ գրկին հրաշք մի թոռնիկ,
Աքսենյան նորից դարձել է փոքրիկ:

Էլ ի՞նչ ծերություն՝ տասը թոռ ունես,
Սարի պես թիկունք որդիներ ունես,
Մոռացիր մի պահ՝ ինչ ցավեր ունես,
Ուժեր հավաքիր, որ ծոռներ գրկես:

Մենք շտապելու ոչ մի տեղ չունենք,
Միայն տա Աստված՝ լավին սպասենք,
Ծննդյան օրը միասին նշենք,
Միայն ու միայն երկար կյանք մաղթենք:

ГАУ РК "Медиатека им. И. Гаспринского"

Աշուն

Ամպերը մաս-մաս արեցին լուսնին,
Տերևը դողաց ծեր ծառի ճյուղին,
Աշնան արևը՝ թուլացած ուժով,
Իր մոտ է կանչում չվող թռչունին:

Աշունն է փռում նախշուն գորգերը,
Իր դեղին ձին է թամբել իգիթը,
Ու նորահարսի պես դողդողալով,
Անտառն է հանում վերջին շորերը:

Ցրտից ցերեկը կուչ եկավ մթնում,
Ով որ սողում էր ամենուր դրսում,
Մտավ գետնի տակ ու անհայտացավ,
Իսկ ուշացողին ագռավն էր փնտրում:

Գետը բարակեց, ափից հեռացավ,
Նա էլ չէր շոյում ճյուղերն ուռենու,
Գորտը իր բույնն է փորում քարի տակ
Ու վերջին անգամ տխուր կռկռում:

Աշուն է գալիս՝ տրտում, գեղեցիկ,
Ու տխրություն է տիրում ամենուր,
Պետք է հավաքել բերքն ամբողջովին,
Որ տարին չանցնի դատարկ ու իզուր:

10.12.15

ГАУ РК "Национальная библиотека Татарского"

Ծերություն

Ամ, ծերության մեջ էլ լավ բան չկա,
Սիրուց անհանգիստ մերժման ցավ չկա,
Մարդուն մաղթում են անհոգ ծերություն,
Բայց իրականում այն բնավ չկա:

Հուշերն են միայն մեկ-մեկ շող տալիս,
Եղած ցավերից մի պահ խույս տալիս,
Թե որ ընտանիք ունես արժանի,
Քո սերունդների լավն է հույս տալիս:

ГАУ РК "Медиацентр им. Н. Г. Спринского"

Չարն ու բարին

Չարը ծնվել է բարու հետ մեկտեղ,
Որտեղ բարին է, չարն էլ է այնտեղ,
Հենց որ բարին է սայթաքում հանկարծ,
Չարը իր գործն է կատարում անշեղ:

Բայց պատահում է՝ չարն է սայթաքում,
Այնժամ բարին է շուտ ոտքի կանգնում,
Այդպես մեկմեկու հրում են հավերժ,
Բայց միշտ անբաժան ընկեր են մնում:

Քեզ համար կյանքում միշտ բարին ընտրիր,
Չարը միշտ էլ կա, նրան մի փնտրիր,
Բարի լինելով՝ չարին կհաղթես,
Նրա գրավիչ տեսքով մի տարվիր:

12.01.16

ГАУ РК "Медицина им. Гаспринского"

Հանցագործը

Պարապությունից դարձա ոճրագործ՝
Ինքս եմ խեղդում անմեղ օրերս,
Հետո դառնում եմ անխիղճ մսագործ,
Մաս-մաս եմ անում անմիտ ժամերս:

Հետո փորձում եմ դառնալ խոհարար.
Այդ կտորներից հուշեր եմ եփում,
Հետո արածից գոհ, բավարարված,
Մոռացած տարիք՝ նորից եմ ապրում:

Պարապությունից դաժան բան չկա,
Երբ չկա մի գործ, որ օրդ վատնես,
Գող կամ հարբեցող գենիդ մեջ չկա,
Ստիպված պետք է երգեր հորինես:

Եվ այսպես, նորից դարձա հանցագործ,
Որ ծերությունս սպանեմ իմ մեջ,
Հին երազներից՝ մի գլուխգործոց,
Նորից զգում եմ ինձ ջահել կարծես:

10. 01.16

ГАУ РК "Национальная библиотека им. М. Горького"

Արի՛, արի՛...

Արի՛, արի՛, շո՛ւտ արի,
Իմ հույսերը մի՛ մարիր,
Անձրև լինի, թե արև,
Սիրող սիրտը կսպասի:

Արի՛, ինչպես գարնան ցող,
Քո կարոտից՝ շուրթս չոր,
Թող մազերիդ ես հպվեմ
Քնքո՛ւշ-քնքո՛ւշ, ինչպես հով:

Թեկուզ մի քիչ խռով-մռով,
Ինձ մոտ արի լոկ սիրով,
Տե՛ս, չուշանա՛ս, սիրելի՛ս,
Ինձ չթողնես կարոտով:

ГАУ РК "Медиацентр им. М. Распринского"

Գրիչ

Գրիչ, դու գրիչ,
Դու իմ խեղճ գրիչ,
Դարձել ես գերի
Դու մարդու ձեռքին:
Թե բախտը բերի
Քո թողած հետքի՝
Ձեռքում տաղանդի
Կհաղթես չարին:
Խարդախի ձեռքով
Քո գրած տողը
Ցներ կքանդի,
Երկիր կավերի:

Գրիչ, դու գրիչ,
Դու տողեր շարող,
Սիրո խոստումի
Մաքուր, անմեղ ճիչ:
Ցավոք, մերժումի
Կարճ տողեր անխիղճ:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

Գրիչ, դու ձեռքին
Բիրտ տիրակալի
Ձենք ես սոսկալի:
Քո մի շարժումով
Բազում ազգեր ես
Դու քաշել սրի:

Գրիչ, դու գրիչ,
Լուրերի ցրիչ,
Երբեմն՝ չամիչ,
Երբմն՝ կարիճ:
Անգետի համար՝
Անանց մի ճահիճ,
Մի անխիղճ դահիճ:
Բայց ներկա դարում
Կոճակն է իշխում,
Մատի շարժումով,
Երկիր են քանդում,
Մատի շարժումով
Բախտ է որոշվում,
Նույնիսկ կնիքը
Շատ հեշտ է կեղծվում:
Մատի շարժումով
Միլիոն է դիզվում,

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Նույնքան էլ՝ կորչում:
Մատի շարժումով
Մարդիկ են կորչում:
Կոճակը կյանքից
Քեզ հետ է հրում,
Աշխարհի բախտը
Անդունդ է տանում:
Բայց դու, իմ գրիչ,
Մտքերիս ցրիչ,
Դու շարունակիր
Խզմզել մի քիչ,
Ու շատ մի տխրիր,
Քանի կամ՝ գրիր:

Գրիչ, իմ գրիչ,
Ցավ ու վշտերի
Խավարից մի ճիչ,
Դու շարունակիր
Մնալ իմ ձեռքին:

ГАУ РК "Медицинский центр им. И. Гаспринского"

Տարբեր մոտեցում

Մի տաղանդավոր, ջահել բանաստեղծ
Եվ մի նկարիչ՝ թուղթ, ներկեր առած,
Գարնան ծաղկունքին գնացին դաշտեր,
Որ ստեղծեն նոր տաղ ու մի նոր նկար:

Տեսան գեղեցիկ ու կանաչ արտեր,
Մեղմիկ քամու հետ շոյվող ալիքներ,
Բայց նրանց ոչ թե այդ էր գրավում,
Այլ՝ արտի միջի բազում ծաղիկներ:

Բանաստեղծը նոր սիրո երգ գրեց,
«Կարմիր կակաչներ» կոչեց երգը այդ,
Իսկ նկարիչը կակաչ ու շաղգամ
Իր նոր կտավում անմահացրեց:

Իսկ հողագործը՝ գերանդուն հենված,
Նայեց իր արտին՝ հոգով դառնացած,
Մտքում ինքն իրեն անչափ նախատեց,
Որ չի քաղհանել արտը վարակված:

ГАУ РК "Национальная б-ка им. Ф.Г. Каспинского"

Ամպերին

Կարկո՛ւտ, մի՛ գա ծաղկած ծառին,
Գնա՛, թափվի՛ր չոլ ու քարին,
Մեղք է, ախր, ծառը հղի
Քարկոծ անել հենց գարունքին:

Ամպե՛ր, եկե՛ք, ամպե՛ր, եկե՛ք,
Իրար գրկած դուք պա՛ր բռնեք,
Որոտացե՛ք, ինչքան կուզեք,
Միայն կարկուտ դուք մի՛ բերեք:

Ամպե՛ր, եկե՛ք ու գնացե՛ք,
Ջերմ արևը դուք մի՛ փակեք,
Թող տաքանան հողն ու ջուրը,
Մեզ տաք անձրև ու ցող բերեք:

Թող որ սերմը ծիլ տա հողում,
Կանաչ մաղվի դաշտ ու սարում,
Թող ջերմանա նույնիսկ քարը,
Ձեզնով նա էլ կյանք է առնում:

12.03.16

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

Խաբելու օրը

Նվիրվում է 2016 թ. ապրիլին
զոհված հայ զինվորների հիշատակին

Ապրիլի մեկն էր՝ խաբելու օրը,
Մեզ խաբել ուզեց էլի նենգ թուրքը,
Ուժը ցույց տվեց՝ տեսնի աշխարհը,
Իբր հետ կառնենք ազատ Արցախը:

Բայց սուտը տևեց լոկ մի քանի օր,
Երբ հայ զինվորից հարված առնելով,
Բազում զոհ տվեց ու տներ քանդեց.
Օձը հետ սողաց՝ «նանա» կանչելով:

Բայց հայը հաղթեց քառօրյա մարտում,
Ի հայտ բերելով նենգ խաղաքարտը,
Քանի որ խառն էր «Մեծ ախպոր» մատը,
Այդ մատը կտրեց մեր հայ զինվորը:
Տեսավ՝ չի կարող հաղթել անհաղթին,
Դե, նա էլ խաբեց իր ժողովրդին,
Իբր՝ կատակ էր դա ապրիլմեկյան,
Որ վախը պատի սիրտը հայերի:

ГАУ РК "Национальный центр им. Н. Гаспринского"

Բայց իր «կատակով» քանի՞ զոհ տվեց…
Իր համար մեկ էր, նա դա չհաշվեց,
Թե քանի մայր է «վա՛յ, բալա՛» կանչել,
Ոչ մի անմեղ զոհ նրան չհուզեց…

Դե, հիմա լսիր, ինչ որ ես կասեմ,
Բոլոր հայերի անունից կասեմ.
«Կատակիդ» վրա ես թքած ունեմ,
Այս անգամ արդեն ես «կատակ» կանեմ:

Թե մեկ էլ տանես ձեռքդ քո սրին,
Ռումբը կպայթի նավթիդ «բուրուղին»,
Էշը, որ էշ է, նա էլ չի կրկնի,
Տխուր կգոռա «կատակիդ» վրա:

Աչքդ կմնա մեր սեգ սարերին,
Իզուր հույս մի տուր անգամ ծոռներիդ,
Խղճում եմ միայն՝ սազը ականջին
«Բիզիմ Կարաբախ» երգող աշուղին:

16.04.16

ГАУ РК "Национ.Гос.им.И.Гаспринского"

Բակիս ծառերը

Տեսնես, կա՞ն հիմա բակիս ծառերը,
Թե՞ չորացել են տարիների հետ,
Կամ վառելիք են դարձել ճյուղերը,
Որոնց շվաքում մեծացել եմ ես:

Կամ էլ հատվել են մի չարի ձեռքով՝
Անտեր մնացած գառնուկների պես,
Իսկ տերը հեռվում՝ կարոտ երազով,
Փլված տան առաջ միշտ տեսնում է ձեզ:

Ասում են՝ ծառը դարեր է ապրում,
Գուցե ծառերն իմ կանգուն են հիմա.
Բարի դրկիցս է նրանց խնամում,
Իսկ շվաքի տակ իր թոռն է նստած:

Թթի ծառերը՝ մեղրահամ բերքով,
Ճյուղ ճյուղի գրկած՝ ինձ են օրորում,
Տանձն ու խնձորը՝ մեռոնի հոտով
Խենթացնում են և հալչում բերանում:

ГАУ РК "Национальный им. М. Горького"

Քանի՛ տուն ու բակ անտեր մնացին,
Որոնց տերերը էլ հետ չեն դառնա,
Օտար հողերում ծառեր տնկեցին,
Որ երազանքը իրականանա:

Թող դալար մնան բակիս ծառերը,
Թեկուզև տերը իմ հարևանն է,
Ոչ թե խաշնարած թուրքի լակոտը,
Որ հայի համար չարիքի բույն է:

20.10.16

ГАУ РК "Медиацентр им. К. Гаспринского"

* * *

Էլ ի՞նչ լեռներ, երբ լանջերին եղնիկ չկա,
Էլ ի՞նչ ծովակ, երբ ջրերում էլ ձուկ չկա,
Էլ ի՞նչ մարդիկ, երբ սրտերում էլ սեր չկա,
էլ ի՞նչ երգեր, երբ երգերում հոգի չկա:

էլ ի՞նչ անտառ, երբ անտառում էլ որս չկա,
էլ ի՞նչ քարեր, երբ նրանցից շենքեր չկան,
էլ ի՞նչ դաշտեր, երբ դաշտերում վարդեր չկան,
Էլ ի՞նչ պոետ, երբ էլ սիրո խոսքեր չկան:

Էլ ի՞նչ եղբայր, երբ արյան մեջ էլ սեր չկա,
Էլ ի՞նչ լավ մարդ, երբ սրտի մեջ էլ խիղճ չկա,
Էլ ի՞նչ աղբյուր, երբ նրանից խմող չկա,
Էլ ի՞նչ աշուղ, երբ երգերը լսող չկա:

Էլ ի՞նչ մայրիկ, երբ ուրիշն է «բալե՛ս» կանչում,
Էլ ի՞նչ որդի, երբ ուրիշն է ծնող պահում,
Էլ ի՞նչ հովիվ, երբ քո հոտը գայլն է ուտում,
Էլ ի՞նչ երկիր, երբ իմ սարին թուրքն է տիրում:

Էլ ի՞նչ թևեր, երբ իր տերը էլ չի թռչում,
Էլ ի՞նչ շաքար, երբ բաժակում էլ չի հալչում,
Էլ ի՞նչ գրեմ, երբ տողերս էլ չեն կարդում,
Էլ ի՞նչ անեմ, երբ առանց գիր էլ չեմ ապրում:

ГАУ РК "Национальная библиотека им. Н. Фатуллаева-Сокуринского"

Հանուն հավատի

Հանուն հավատի մարդիկ են զոհվում,
Հանուն հավատի մարդկանց են զոհում,
Հանուն հավատի՝ անհավատ դառնում,
Այս կյանքից դժգոհ՝ ուրիշն են փնտրում:

Առանց հավատի մարդը գազան է,
Բայց կույր հավատը ինքը գազան է,
Ազգերի միջև բիրտ գավազան է,
Հոգուն տիրելու մի խարազան է:

Հանուն հավատի անմահ են դառնում,
Հանուն հավատի հերոս են դառնում,
Հանուն հավատի՝ ծնող ուրանում,
Անհավատ դարձած՝ միլիոններ դիզում:

Հավատացյալի անարատ հոգում
Հավատն է միայն ու երկնայինը,
Գրպանը՝ դատարկ, հավատը՝ սրտում,
Հարստությունը՝ իր աղոթքները:

ГАУ РК "Национальная библиотека им. М. Горького"

Հայե՛ր, հայե՛ր...

Հայե՛ր, հայե՛ր՝ ես ձեր մաքուր ծոցում ծնված,
Հարազատներ՝ աշխարհով մեկ, ցավոք, ցրված,
Կարոտ ու ցավ ամեն մեկդ հոգում պահած,
Հազա՛ր ափսոս, որ շատերդ՝ լեզուն փոխած:

Հայե՛ր, հայե՛ր, հեռու և մոտ հարազատներ,
Հաստատ գիտեմ՝ դուք այդ կյանքը չեք երազել,
Պատահել է՝ ընտանիք եք մահից փրկել,
Վերադարձի դուռը երբեք դուք չեք փակել:

Հայե՛ր, հայե՛ր, գոնե ձեր մայր լեզուն պահեք,
Ձեր պապերի շիրիմները մի՛ մոռացեք,
Ձեր սերնդում այբուբենի տառը պահեք,
Հանդիպելիս՝ միշտ հայերեն բարևեցեք:

Հայե՛ր, հայե՛ր, դուք իրար միշտ ձեռք մեկնեցեք,
Ձեր մայր հողը պաշտպանողին թիկունք եղեք,
Թե չլինի ձեր մայր հողը՝ դուք էլ հայ չեք,
Կամաց-կամաց օտար հողում դուք կձուլվեք:

ГАУ РК "Национальная библиотека имени Н.Г.Чернышевского"

Հայե՛ր, հայե՛ր, կգա օրը՝ էլ չեք ցրվի,
Ձեր մատները՝ բռունցքի պես Մեծ Միերի,
Իսկ քատեզը Տիգրան Մեծինը կլինի,
Գիրը՝ Մաշտոց, գերբը Մասիս սարը լինի:

Հայե՛ր, հայե՛ր՝ միլիոնատեր, թե աղքատ մարդ,
Հայրենիքում հիմա ապրող ամեն մի հայ
Ոտքերի տակ՝ մեր հայրենի հողն անարատ,
Իսկ դիմացը՝ որպես փարոս լեռն Արարատ:

Հայե՛ր, հայե՛ր՝ ինչպես չված կռունկները,
Դարձեք նորից դեպի դատարկ ձեր բները,
Որ ձեր հողում ծնվեն մեր հայ բալիկները,
Բավ է, ինչքան օտարներին տանք ձագերը:

ГАУ РК "Медиацентр им. И. Аспринского"

Հարյուր տարի

Ահա անցավ հարյուր տարի
Ամոթանքից այս աշխարհի՝
Այն անամոթ լռությունից,
Երբ արյունն էր հոսում հայի:
Որպես հաճույք սատանայի՝
Ժանտ ուղեղում վիժվածք թուրքի
Ծնվեց դաժան մի ծրագիր,
Որ վերջը տա անմեղ հայի:
Ողջ մարդկության աչքի առաջ
Սրի քաշվեց ազգն իմ հանճար,
Եվ որբ հողը դառը տնքաց,
Մնաց լոկ մի խաչ կիսաջարդ:
Խաշնարած քուրդն այդ սուրբ հողում
Գոմ է դարձրել պալատներդ,
Գովազդ դարձրել օտարի աչքում
Արյամբ ներկված Վանա ծովդ:
Դարձել ենք Տիրոջ փորձադաշտ,
Ուր հայի հավատն է փորձվում,
Բայց ինչո՞ւ մե՛նք նոխազ դարձանք՝
Աշխարհը չի պատասխանում:

10.04.15

ГАУ РК "Национальная б-ка им. И. Гаспринского"

Որոնում

Կարծես չեմ սիրում, մոռացել եմ քեզ,
Բայց ինչո՞ւ, ասա, հազարների մեջ
Աչքերս քեզ են փնտրում մշտապես,
Ես քեզ չեմ կարող իմ սրտից հանել:

Իմ բախտն ուրիշ է՝ քոնից շատ հեռու,
Ուրիշն է արդեն տիրել իմ հոգուն,
Բայց իմ աչքերը չեն հանգստանում,
Նորից ու նորից քեզ են որոնում:

Փնտրում են, փնտրում անցած օրերը,
Հազարների մեջ՝ ծանոթ դեմքերը,
Նրանց գտնում եմ լոկ այն ժամանակ
Երբ որ փակվում են կոպերս հոգնած:

Կարծես չեմ սիրում ու չեմ էլ սիրել,
Բայց իմ աչքերին ի՞նչ է պատահել,
Խելագարի պես միշտ փնտրում են քեզ.
Չէ՞ որ դու ուրիշ կյանքում ես եղել:

ГАУ РБ "Национальная библиотека им. Н. Аспринского"

Մոխրաթաղ

Ծննդավայրս գյուղն է Մոխրաթաղ,
Հիմա հեռու է, սիրտս է մղկտում:
Խաղաղ ապրում էր լեռների գրկում,
Թուրքը ավերեց իմ գյուղը չքնաղ:

Նոր ծնունդ առած՝ ապրում է գյուղը,
Բայց ավերված է իմ պապի տունը,
Ապրում եմ հիմա հեռու Ղրիմում,
Ինչպես թռչունը՝ կորցրած իր բույնը:

Իմ մանկությունը այնտեղ է անցել,
Ծիծաղել եմ ես և տխուր լացել,
Այնտեղ եմ սիրո կարոտն իմ առել,
Հիմա ամեն ինչ երազ է դարձել:

Գյուղի քարտեզն է հոգումս դաջված՝
Ներքին ու վերին թաղերը ծաղկած,
Ղուզե ու Գյունե թաղերը նախշած,
Մեծ Մռավ սարը արևով ծագած:

ГАУ РК "Медиатека имени А. Гаспринского"

Ծոցս դեռահաս խնձորը լցրած՝
Վազում եմ ուրախ, ինչպես ուլ խրտնած,
Բարձրանում Դերունց քարափը շիկնած,
Արթնանում քնից՝ թաց բարձը գրկած:

Ինձ պես քանիսը հեռացան գյուղից,
Չեմ խմի քաղցր Քյահրիզի ջրից,
Ինչպե՞ս չանիծեմ թուրքի վիժվածքին,
Որը մեր հայոց ցավն է դարերի:

* * *

Եթե մենք մեկին էշ ենք անվանում,
Որ շատ համառ է ու չի հասկանում,
Վիրավորում ենք անմեղ կենդանուն,
Նրա մեջ մեզ ենք կարծես թե տեսնում:

Բոլորիս մեջ էլ էշությունը կա,
Ինչքան էլ խելոք մտքերն են առկա,
Բայց երբ սխալ ենք գործում շատ կոպիտ,
Ձգում ենք՝ էշ ենք՝ նմանը չկա:

ГАУ РК "Национальная б-ка им. И. Гаспринского"

Հավատա

Ապրում էի հանգիստ կյանքով,
Քնում էի ես անխռով,
Ինչո՞ւ եկար, ա՛յ դու անխիճ.
Իմ հանգիստը կորավ շուտով:

Թփրտում է սիրտս գժված՝
Ինչպես եղնիկ վախից խրտնած,
Ու անծանոթ մի զգացում
Դեպի քեզ է ձգում անսանձ:

Դու իմ բախտը շատ փոխեցիր,
Իսկ եթե դու ինձ սիրեիր,
Մենք բախտավոր կլինեինք.
Դու հավատա իմ խոսքերին:

ГАУ РК "Медиацентр им. М. Гаспринского"

Անմահություն

Ես նոր չեմ ծնվել այս հողի վրա,
Մեկն եմ առաջին մարդ կոչեցյալից,
Երբ Աստուծո կամքով այս աշխարհ եկա,
Դարձա Մեծ Հայկի թիկնապահներից:

Մի անգամ չէ, որ ես հայ եմ ծնվել
Հզոր Տիգրանի մեծ պետությունում
Անհաղթ բանակի զինվորը եմ եղել,
Որից թշնամին միշտ էր սարսափում:

Բազմաթիվ էին մեր աստվածները,
Ամեն մի աստված իր ուժը ուներ,
Իսկ տաճարներում հզոր քրմերը
Աղոթում էին՝ տալով մեզ հույսեր:

Սեպագրերից տառեր եմ կոփել,
Ժայռերի վրա պատմություն թողել,
Բագրատունյաց մեծ արքա եմ եղել,
Մեր սահմաններն եմ անսասան պահել:

ГАУ РТ "Национальная библиотека им. М. Горького"

Քանի անգամ եմ ծնվել ու զոհվել,
Եղել եմ կռիվում հավատի փրկիչ,
Բայց իսպառ երբեք ես չեմ մահացել,
Ամեն մի դարում ապրել եմ փոքր-ինչ:

Դարեր ապրեցի իմ հայրենիքում.
Եվ սուր բռնեցի, և հող վարեցի,
Տեսա հաղթանակ, նաև՝ պարտություն,
Դավաճանին՝ մա՛հ, փա՛ռք հերոսներին:

Իսկ երբ ուրացանք մեր հին սրբերին,
Աստված երևի խռովեց մեզնից ,
Մենք Քրիստոսի խաչը ընտրեցինք,
Այն էլ մեզանից խլել ուզեցին:

Տեսա, թե ինչպես քոչվոր ցեղերը
Մաս-մաս արեցին մեր մեծ երկիրը,
Ինձ ստիպեցին փոխել հավատս,
Որ ես մոռանամ իմ հայ լինելը:

ГАУ РК "Национальная библиотека им. Г. Распутина"

Վայրի ցեղերը՝ բիրտ, թափառական,
Ինձ բզկտեցին, նորից խաչեցին,
Դավեր նյութեցին, գանձեր խոստացան.
Ես լեռներիս պես կանգուն մնացի:

Աշակերտեցի Մեծն Մաշտոցին,
Հայ մանուկներին ուսուցիչ դարձա,
Օտար, խորթ լեզվից նրանց փրկեցի,
Սուրբ Խորանացու գրիչը դարձա:

Կռվեցի նաև օտարի համար,
Երբ իմ սեփական հողը չունեի,
Երբ կիսատ-պռատ կար մի Հայաստան,
Նույնիսկ դրանով պարծենում էի:

Բայց երբ ցանկացա ես ոտքի կանգնել,
Հողը սկսեց իմ տակ երերալ,
Ծեներ, քաղաքներ ավերակ դարձան,
Աստված ցանկացավ իմ կամքը փորձել:

ГАУ РК "Национальная библиотека им. Г. Аспринского"

Այդ ծանր լուծը ես թոթափեցի՝
Մեզ պատնեշ դարձած օտարի դավը,
Դարձա նոր զինվոր, ելա պայքարի,
Եվ Արցախ որդին միացավ մորը:

Ներկայումս կա մի նոր Հայաստան,
Այն ծովից ծով չէ, այլ՝ փոքրիկ ոստան,
Բայց պատմությունը միշտ կրկնվում է,
Միայն թե կամքը լինի անսասան:

Ոսկոր չես խլի բորենու ձեռքից,
Եթե առյուծ չես, այլ փոքրիկ մի ձագ,
Բայց ես անմահ եմ, հավատացեք ինձ,
Առյուծի ձագը փոքր չի մնա:

Ամբողջ աշխահում ցրված իմ ազգը
Մի օր կպարի Մասիսի շուրջը,
Այնժամ ես նորից կծնվեմ մորից,
Գդառնամ Մեծն Տիգրանի աջը:

ГАУ РК "Национальная библиотека им. Кафринского"

Սիրո մասին

Սեր կա՝ իսկական,
Սեր կա՝ գրական,
Շատերի մոտ էլ՝
Միայն բեմական:

Սեր կա, որ կիրք է,
Սեր կա, որ կյանք է,
Շատերի մոտ էլ
Տուն քանդող զենք է:

* * *

Բեմից երգում է.
– Սիրո՛ւմ եմ, սիրո՛ւմ…
Գրպանն է լցնում
Ու նորից խաբում:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Լեզուն ասաց.
– Քեզ սիրեցի՛:
Սիրտը ասաց.
– Շտապեցի՛ր:

Լեզուն ասաց.
– Կյա՛նքս կտամ:
Սիրտը ասաց.
– Շա՛տ ստեցիր:

* * *

Թե որ մեկին դու շա՛տ-շա՛տ ես սիրում,
Ճիշտ խոսի, թե սուտ, շուտ ես հավատում,
Սրտիդ ուզածը՝ նրա մեջ գտնում,
Ուրիշի աչքով նայել չես ուզում:

ГАУ РК "Медицинский им. И. Гаспринского"

Իմ Ղարաբաղը

Իմ Ղարաբաղը փոքրիկ է այնքան,
Որ հոգուս մեջ է նա տեղավորվում,
Բարձր լեռներով, դաշտերով իր լայն,
Իր հերոսներով շնչում է, ապրում:

Իմ Ղարաբաղի քարտեզը փոքր է,
Բայց մոր գրկում է՝ մանուկի նման,
Իսկ հոր անունը փառապանծ Հայք է,
Էլ ուրիշ անուն իմ հոգում չկա:

Իմ Ղարաբաղը աշխարհի մասն է,
Մեծ է, թե փոքր, դա չէ կարևոր,
Նա երակներիս արյան տաք թասն է,
Նրա շնչով եմ ապրում ամեն օր:

Աշխարհում փոքր մայրեր չեն լինում,
Մենք ենք փոքրանում՝ դա մոռանալիս,
Թե որ արմատդ Արցախն է սնում,
Ուրեմն շյուղն ես Մայր Հայաստանի:

ГАУ РК "Национальная библиотека им. М.Е. Аспринского"

Իմ Ղարաբաղը փոքրիկ է այնքան,
Բայց նա ինձ համար մեծ է բոլորից,
Գայլ ու բորենի ինչքան էլ ոռնան,
Էլ ոտք չեն դնի մեր սուրբ հողերին:

Ով որ չի ուզում ճանաչել նրան,
Մենք էլ չենք մուրում նրանց կարծիքը,
Կարևորն այն է, որ կա Հայաստան,
Ու ղարաբաղցու անկոտրում կամքը:

Իմ Ղարաբաղը փոքրիկ է այնքան,
Բայց նա ինձ համար աշխարհի չափ է,
Դարեր են անցել ու էլի կանցնեն,
Բայց նա հայերի փրկության ափն է:

ГАУ РК "Медиацентр им. И. Казринского"

Կեսօրից հետո

Կեսօրից հետո արևն է թեքվում,
Եվ ստվերներն են լուռ տեղափոխվում,
Ինչ առավոտյան մութ էր ու անհայտ,
Մինչև կեսօր է իր տեսքը բացում:

Կեսօրից հետո բույսը չի ծաղկում,
Մինչև կեսօր է ծիլը լույս տեսնում:
Մեր կյանքը գարնան օրվա է նման,
Մինչև կեսօր են տաղանդներ ծնվում:

Կեսօրից հետո պտուղն է հասնում,
Հովիվը հոտն է դեպի տուն դարձնում,
Իսկ մեր ուղեղում փորձ է կուտակվում,
Սերնդից սերունդ իրար փոխանցվում:

Կեսօրից հետո մեր անցած ուղին
Խավարած ելավ ձոր ու քարափից,
Ու ստվերներն են մեզ հետապնդում,
Սնվում մեր թողած ճիշտ ու սխալից:

ГАУ РК "Национальная библиотека им. Ю. Гаспринского"

Կեսօրից հետո կա գեղեցկություն,
Թե որ արևդ ունի ջերմություն,
Սառույցն է հալվել մարդկանց հոգու մեջ
Ու չի հրդեհել անտառներ ու տուն:

Կյանքիս արևն էլ կեսօրին թեքվեց,
Իմ ջերմությունից կյանքի ծառ աճեց,
Իսկ մայրամուտից հետո էլ՝ գիտեմ,
Որ աստղիս համար փոքրիկ տեղ բացվեց:

ГАУ РК "Медиацентр им. И. Казаринского"

Առաջին սերը

Առաջին սերը այն ձնծաղիկն է,
Որը բացվում է գարնան սկզբին,
Նրա թերթերին կիջնեն ցուրտ օրեր,
Աշունն է ժպտում միայն քչերին:

Եվ անմոռաց է առաջին սերը,
Սակայն քչերն են այն միշտ պահպանում,
Իսկ շատերի մոտ մնում է հուշը,
Բայց, ավա՜ղ, արդեն շատ ուշ է լինում:

Ամեն տարիքում սերը չքնաղ է,
Բայց առաջինը նուրբ է բոլորից,
Այն շատ կրքոտ է, մաքուր ու անմեղ
Ու չի թառամում քո կյանքի ցրտից:

Առաջին սերը քո մանկությունն է՝
Արևից խաբված ծաղիկն առաջին,
Պահիր, պահպանիր, նա միայն քոնն է,
Ու շատ մի տրվիր վարդի փնջերին:

Առաջին սերը ծաղիկն է գարնան,
Թե անգամ այնտեղ համբույր էլ չկա,
Դա այն ծաղիկն է, որ հոգուդ մեջ է,
Եվ այն չի պոկվի, քանի ապրում ես:

ГАУ РК "Национальная библиотека им. А. Гаспринского"

ՔԱՌՅԱԿՆԵՐ

* * *

Հնում բոբիկ էր քայլում քահանան,
Իսկ այժմ ունի շքեղ մեքենա,
Թող Աստված ների և ինձ, և նրան,
Այդպես քարոզիչ լավ է չունենալ:

* * *

Մի թափեք աղբը բակում, փողոցում՝
Ո՛չ ձեր կերածը, ո՛չ չկերածը,
Որ հետո չապրենք մենք աղբանոցում
Ու նորից ուտենք մեր իսկ նետածը:

* * *

Այդ ե՞րբ եկավ, ե՞րբ անցավ
Կյանքս՝ ինչպես մի երազ,
Անցավ հազար ցավ ու դավ,
Մնաց քաղցր մի մուրազ:

ГАУ РК "Национальная б-ка им. И. Гаспринского"

* * *

Ես էլ կանցնեմ շատերի պես՝
Աննկատ ու առանց դավ,
Բայց մտքերս, արի ու տես,
Գրքերիս մեջ տեղ գտան:

* * *

Քանի՞ կյանք եմ ապրել ես.
Ո՛չ դու գիտես, ո՛չ էլ՝ ես,
Քանի՞ մարմին՝ մի հոգով,
Աստված գիտի, բայց ոչ ես:

* * *

Կա՞ հանդերձյալ կյանք կամ, գուցե, չկա՞.
Մեր ուղեղներում պատասխան չկա,
Նրա փոխարեն հույսն է լուռ նստած,
Որ իբր այնտեղ դարդ ու ցավ չկա:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Քաղցրն ու դառը, համեղն ու թթուն
Միշտ հարկավոր են ապրելու համար,
Պատահում է, որ քաղցրն է սպանում,
Իսկ բուժման համար պետք է օձի թույն:

* * *

Բարին ու չարը բոլորիս մեջ կան,
Նայած՝ գենի մեջ որից ինչքան կա,
Հաճախ շատ բարուց ծնվում է չարիք,
Բայց չարիքից է, որ բարին միշտ կա:

* * *

Լավ ու վատ մարդիկ աշխարհում չկան,
Բոլորս մեկ ենք, թե շեղում չկա,
Թե բույսի տակին կավահող է, քար,
Քաղցր ծիրանն էլ սալոր կդառնա:

ГАУ РК "Медицинский центр им. И.Е. Каспринского"

* * *

Դու գնա՛, մեռի՛ր, որ քեզ շատ սիրեմ.
Հաճախ այդպես է կյանքում պատահում,
Կեղտոտ փողերից մի քիչ նվիրում
Ու ազգի համար հերոս են դառնում:

* * *

Թե հետք ես թողել քո հայրենիքում,
Իզուր չես ապրել դու այդ սուրբ հողում,
Հողը հարազատ, սիրասուն մայր է,
Իր որդիներին նա չի մոռանում:

* * *

Երբ աստվածներն են վերևում վիճում՝
Ո՞վ է իրենցից ճիշտը քարոզում,
Հավատացյալն է աշխարհում զոհվում,
Անհավատների գործն է հաջողվում:

ГАУ РК "Медицинр им. Н. Гаспринского"

* * *

Ո՛չ ծնվելն է քո կամքով,
Ո՛չ՝ գնալն այս աշխարհից,
Հարուստ լինես, թե աղքատ՝
Մարդ ապրելն է քո կամքով:

* * *

Այո, տխուր է միշտ մայրամուտը,
Առջևում մութն է ու մեծ անհայտը,
Բայց թե չլինի այդ մայրամուտը,
Չի բացվի նորից վառ առավոտը:

* * *

Գետը ձգտում է շուտ հասնել ծովին,
Պապակած հողը դեմ է այդ մտքին,
Իր գիրկն է ուզում առնել սիրածին,
Որ աշխարհ բերի ծիլ ու կանաչին:

ГАУ РК "Медиацентр им. И. Есенинского"

* * *

Ես անցվոր շող եմ իմ ապրած դարում՝
Ծագած Հայաստան կոչված աշխարհում,
Իմ ջերմությունից կոկոն է բացվում,
Հողն է ջերմանում, ծիլն է բոյ քաշում:

* * *

Վաղուց է արդեն դադարել տեղալ
Գարնան անձրևը կյանքիս լեռներում,
Իսկ ես չեմ ուզում դադարել հուսալ,
Ձնհալի հույսով այգի եմ տնկում:

* * *

Վերին թաղից փչեց հովը,
Սիրտս հանկարծ մեղմ թրթռաց,
Ա՛խ, երևի իմ սիրածը
Արթնացել է՝ սիրուց հուզված:

ГАУ РК "Медиатека им. М. Распринского"

* * *

Գարուն եկավ մեր սարերում՝
Աղջիկները կարճ են հագնում,
Խենթանում են տղաները՝
Աղջիկներին դա չի հուզում:

* * *

Անձրև, մի՛ գա այդպես վարար,
Յարիս գալու ժամն է հիմա,
Թող գա՝ քաղցր համբույր առնեմ,
Հետո կուզես՝ արի վարար:

* * *

Մեկը շուշան է փնտրում դաշտի մեջ,
Սակայն քաղում է սիրտ դաղող եղինջ,
Քանի դեռ սերը խորն է սրտի մեջ,
Եղինջը աչքին՝ վարդ է դաշտի մեջ:

ГАУ РК "Медиатека им. М. Гаспринского"

* * *

Աղբյուրի ջուրը խմեմ քո բռով,
Դիմացս լինի մեր սարը Մռով,
Թեկուզ աշխարհը ինձնից նեղանա,
Միայն թե յարս չլինի խռով:

* * *

Սիրողի աչքին՝ ինքն է շատ սիրում,
Ու իր տեսածը ոչ ոք չի տեսնում,
Ով դեմ է խոսում, շատ է նեղանում՝
Իր վատն ուզողին բարեկամ կարծում:

* * *

Ապրում եմ հիմա Ղրիմում,
Հոգիս այնտեղ է՝ Արցախում,
Ինչքան էլ ճոխ ապրեմ այստեղ՝
Հոգիս քաղցած է միշտ մնում:

ГАУ РК "Медиатека им. М. Гаспринского"

* * *

Շատ լավ բան է խմիչքը,
Լիքը բաժակն է կիրքը,
Բայց հենց նրան տրվեցիր՝
Արագ կառնի քո խելքը:

* * *

Ասում են, թե կեղտ է փողը,
Բայց այդ կեղտն է փորը լցնում,
Անգամ եթե հաշվում ես այն,
Մատներդ ես շուտ-շուտ լիզում:

* * *

Մի հայրենիք կա հեռվում,
Որից կարոտս է եռում,
Երազներում ես այնտեղ
Անցած օրերս եմ փնտրում:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Տարիներս հավքի պես
Տարան ջահել օրերս,
Լավն ու վատը թևերին՝
Տարան տվին ամպերին:

* * *

Մեկ-մեկ նստում եմ, հաշվում,
Լավ օրերս եմ ես ջոկում,
Այդ մեծ պարկում իմ կյանքի
Միայն մեկ բուռ է մնում:

* * *

Ես՝ ծեր կաղնի անտառում,
Փչակիս մեջ՝ մեղվաբույն,
Մեղրից ես հյութ եմ քամում,
Բայց կացնով են ինձ փնտրում:

ГАУ РК "Медицинский центр им. Н. Гаспринского"

* * *

Սարի բարձունքից հպարտ գոռացի.
– Ես հա՛յ եմ, հա՛յ եմ...
Բարձր սարերը արձագանքեցին.
– Հա՛յ, հա՛յ եմ, հա՛յ եմ...

* * *

Չասված մտքերս նետում եմ անփույթ
Աղբարկղի մեջ, ինչպես անպետք նյութ,
Գուցե նրանց հետ այն անցպթուղթն է,
Որը կտաներ հաղթական բարձունք:

* * *

Գյուղից հարս բերին՝ իբրև անարատ,
Քաղաքի բարքից՝ մաքուր, անտեղյակ,
Բայց շուտով հարսը դարձավ շատ գիտակ,
Իսկ քաղաքացիք՝ կյանքից անտեղյակ:

ГАУ РК "Медиацентр им. М. Горького"

* * *

Ինչպես որ կասեր Օմար Խայամը՝
Գինին է բերում բերանի համը,
Բայց շատ խմելուց քո երիկամը
Մոռանալ կտա քո ախորժակը:

* * *

Կռիվն սկսվեց ու շատ տուն քանդեց,
Շատ ավազակներ դարձան հերոսներ,
Ով որ մեղք չուներ, ամեն ինչ կորցրեց,
Աթոռակռիվ թափով սկսվեց:

* * *

Մենք օձի պոչը միայն կտրեցինք
Ու մեր լեռներից նրան քշեցինք,
Հին օրենքներից հրաժարվեցինք,
Լավ կյանքի վրա մենք խաչ քաշեցինք:

ГАУ РК "Медицинский центр им. Р. Гаспринского"

* * *

Մենք թաքուն էինք մեր հողը հիշում,
Գրում կամ երգում ու վշտից լացում,
Հիմա դա ոչ ոք էլ չի արգելում,
Բայց դե դրանից ոչինչ չի փոխվում:

* * *

Մենք ամբողջ ուժով գոռում ենք, ճչում,
Մեր հարյուր տարվա եղեռնն ենք հիշում,
Բայց չենք հասկանում կամ էլ չենք ուզում
Հավատալ՝ ուժն է ճիշտը որոշում:

* * *

Արդարությունը սրով էր լուծվում,
Իսկ այժմ փողն է աշխարհին տիրում,
Մենք ո՛չ փող ունենք և ո՛չ էլ ատոմ,
Այդ իսկ պատճառով մեզ չեն պաշտպանում:

ГАУ РК "Медиацентр им. И. Есенгринского"

* * *

Խելացին ու անգործը թողնում են, գնում,
Եվ գյուղեր ու քաղաքներ անտեր են մնում.
Գոմռում է ու հաչում շունը գազազած,
Բայց, փա՛ռք Աստուծո, դեռևս բնում է նստած:

* * *

Գիտեմ՝ ասածիս էլ լսող չկա,
Բայց դե ի՞նչ անեմ՝ հոգումս մուռ կա,
Ես ինքս գրեմ, ինքս էլ կարդամ,
Գուցե թե մի օր ուրիշն էլ կարդա:

* * *

Թե որ բարձրացավ աշխատավարձդ,
Վա՛յ, կրկնապատվեց քո տնավարձը,
Թե ավելացավ մի քիչ թոշակդ,
Իսկույն թանկացան շուկան ու դեղը:

ГАУ РК "Медиацентр им. Н. Гаспринского"

* * *

Երբ մանուկ էի, քիչ բան գիտեի,
Երբ հասունացա, շատ բան փնտրեցի,
Երբ որ ծերացա, այնժամ հասկացա,
Որ ինչքան գտա, նույնքան էլ կորցրի:

* * *

Այն ի՞նչն է, ասեք, որի սկիզբը
Տեսել եք, սակայն բան չեք հասկացել,
Երբ տեսնեք վերջը, համոզված եղեք՝
Չեք հասկանալու դարձյալ իմաստը:

* * *

Ծովը ծարավ է քաղցր ջրերի,
Խենթ սիրահարը՝ քաղցր համբույրի,
Սիրուց մերժվածը՝ հոգում դառնություն,
Միշտ սպասում է խոսքեր զոջումի:

ГАУ РК "Медицинский центр им. Н.Г. Аспринского"

* * *

Արևը թեքվեց դեպի մայրամուտ,
Հետևում լույս է, իսկ առջևում՝ մութ,
Հետևում կյանք էր՝ լավ կամ ոչ այնքան,
Առջևում մի բան՝ բոլորիս անհայտ:

* * *

Փող է հարկավոր՝ գլխարկ գնելու,
Որը պատիվ է մարդուն բերելու,
Գլխարկը միշտ էլ բարձր է գլխից,
Թեև գլուխն է փող աշխատելու:

* * *

Վատ երազ է տեսել մուկը՝
Ջուր է լցվում իր ծակ բույնը,
Իսկ դռանը՝ թարսի նման,
Ջորացել է կատվի բուկը:

ГАУ РК "Медицинер им. Г. Гаспринского"

* * *

Մեծ ժողով էր անտառում՝
Գայլերն էին հավաքվում,
Դա ժողով չէր հասարակ՝
Ոչխար էին բաժանում:

* * *

Տանձը ուզեց անկախ լինել՝
Ընկավ ծառից,
Վերցնող չեղավ՝
Սառավ ցրտից:

* * *

Ամրացնող է մեխի թափը՝
Կարճ է, թե ոչ նրա չափը,
Բայց թե գլխին դու չխփես,
Նա չի կապի իրար փայտը:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Երբ ջահել էի՝ երազում էի,
Ամպերից վերև թևածում էի,
Իսկ հիմա արդեն ես երազում եմ,
Որ այդ տարիքում նորից հայտնվեմ:

* * *

Գետը միշտ կուզեր հոսել դաշտերով՝
Ծառեր, ծաղիկներ ջերմ համբուրելով,
Քան խոր կիրճերով մեծ ծովին հասնել,
Հազար կեղտ ու ցավ իր մեջ առնելով:

* * *

Այն, ինչ նախկինում աղքատն էր ուտում,
Հիմա մոդայիկ բան է քաղաքում,
Աղքատի խաշն ու հացը ժենգալով
Սեղանի վարդ են հիմա համարում:

ГАУ РК "Медицинский центр им. М. Аспринского"

* * *

Պատռված շորով ջահել տղային
Միշտ ծաղրում էին՝ աղքատ կոչելով,
Հիմա չես ջոկի հագուստի տեսքից՝
Տղա՞ է, թե՞ կին՝ ճղված շալվարով:

* * *

Ծխող կանանց վրա միշտ խեթ են նայել,
Նրանց կոչել են կամ ջադու, կամ ծուռ,
Հիմա շատ ջահել հարս ու աղջիկներ
Սկեսրոջ մոտ են ծխախոտ վառում:

* * *

Հնում տերտերը բոբիկ էր քայլում,
Հիմա թանկարժեք «Պեժո» է վարում,
Պսակ օրհնելը լոկ կոպեկներ էր,
Արդ դոլարով է վարձը նա վերցնում:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Հարուստը միշտ էլ ձիով է շրջել,
Աղքատը՝ ոտքով, կոշիկ է մաշել,
Աղքատ ու հարուստ ինչպես էլ շրջեն՝
Վերջում ձեռքով են բոլորին տանում:

* * *

Երբ դու քայլում ես կոկիկ ասֆալտով
Կամ էլ գյուղական ցեխոտ ճամփեքով,
Ոտքիդ տակ նայիր՝ չհայտնվես փոսում,
Քանզի ոչ միշտ են փոսերը լցնում:

* * *

Գյուղը դատարկվեց, քաղաքը լցվեց,
Քաղաքում տաքուկ ջերմոց կառուցվեց,
Բայց բերքի համը իսպառ վերացավ,
Երբ որ գյուղացին այնտեղ գրանցվեց:

ГАУ РК "Медиацентр им. М. Распринского"

* * *

Թե ծառ ես տնկում՝ բերքատու տնկիր,
Վայրի ծառերը առանց քեզ կաճեն,
Թե երգ ես գրում՝ նոր միտք տարածիր,
Որ քեզնից հետո ուրիշը երգի:

* * *

Հերոսներ պետք են ամեն ժամանակ,
Ամեն մի երկիր ունի իրենը,
Նրանք ծնվում են հենց այն ժամանակ,
Երբ որոշվում է ապրել-չապրելը:

* * *

Մի բաժակ ջուրը կյանքը կփրկի,
Բայց ջրով կենաց երբեք չենք խմի,
Մի բաժակ օդին հույսդ կփշրի,
Թե որ վերջինն է մի ամբողջ շշի:

ГАУ РК "Медицинского им. И. Гаспринского"

ԱՌԱԿՆԵՐ

Ստուգողը

Մեծահարուստի որդին տուն եկավ,
Ասաց. «Հայրի՛կ ջան, նոր փորձանք եկավ,
Մի շատ անկաշառ տեսուչ է գալիս,
Ասում են՝ վա՛յ նրան, ով ճանկը կընկնի»:

Իսկ փորձված հայրը՝ առանց կատակի.
– Ուշադի՛ր նայիր, տես՝ բերան ունի՞:
Որդին զարմացած դուրս գնաց, եկավ,
Ասաց. «Եկողը մեծ բերան ունի»:

– Հանգիստ կաց, որդի՛ս, դու մի վախեցիր,
Թե բերան ունի, ամպայման կուտի,
Բայց ցավն այն է, որ չեմ ու չում կանի,
Հետո կուլ կտա, աչքն էլ չի թարթի:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Насринского"

Ջրաղացպանը

Կար մի ջրաղացպան՝ գծուծ ու ժլատ,
Աղունի հարկը վեցնում էր նա շատ,
Կշեռքը դրած հենց մուտքի առաջ՝
Պակաս չէր վերցնի ցորենի մի հատ:

Երբ որ ծերացավ, ու մահն էր շատ մոտ,
Իր միակ որդուն նա կանչեց իր մոտ
Եվ վերջին անգամ նրան խրատեց՝
Իրար կապելով բառերը մի կերպ.

– Ջրաղացն ու գործս ես հանձնում եմ քեզ,
Ինձ պես՝ մարդկանց հետ բարի կլինես,
Որ ինձ հիշելիս՝ ասեն.«Ողորմի»,
Չխայտառակե՛ս անունս բարի:

Հոր մահից հետո տղան մտածեց,
Հոր պատգամները լավ իրագործեց,
Կշեռքը շուտով նա բակից հանեց,
Ջրաղաց տանող կամրջին դրեց:

ГАУ РК "Национальная библиотека им. А.С. Пушкина"

Մարդիկ այդ տեսան ու շատ զարմացան,
Ասացին.«Որդին անցավ իր հորից,
Հայրը խիղճ ուներ՝ ողորմի՛ նրան,
Բակում էր վերցնում հարկը ջրաղացի»:

Որդին այդ լսեց և ուրախացավ,
Որ հոր պատգամը իրական դարձավ,
Մի տարի չանցած՝ հարկը բարձրացավ,
Ողորմի տվող մարդիկ շատացան:

Աղվեսի ֆերման

Շեկլիկ աղվեսին բարի լուր բերին,
Որ նրան մի նոր պաշտոն են տվել,
Թե՝ տնօրեն ես դու ֆաբրիկայի:
Աղվեսը լսեց, սկսեց լացել:

– Ինչո՞ւ ես լացում,– հարցրեցին նրան,–
Մի՞թե ուրախ չես մեր բերած լուրով:
– Չէ՛, ի՞նչ եք ասում,– ասաց աղվեսը,–
Հանկարծ տարվեցի քաղցր հուզմունքով:

ГАУ РК "Национальная библиотека им.И.Г.Чавчавадзе"

Անցավ մեկ տարի երջանիկ օրից,
Ու ժողովուրդը ապշեց զարմանքից,
Երբ աչքով տեսավ, որ հավերն այդքան
Բազմացան. քանակն անցավ միլիոնից:

– Ա՛յ աղվես եղբայր, մենք կարծում էինք,
Որ այդ ֆաբրիկան դատարկ կտեսնենք,
Աճը որտեղի՞ց, այս ի՞նչ հրաշք է,
Դու բարգավաճող ֆերմեր ես դարձել:

– Ժամանակի հետ ես էլ եմ փոխվել,
Հիմա դարձել եմ սեփականատեր,
Խանութներ ունեմ այժմ բազմաթիվ,
Պատգամավորի թեկնածու եմ ես:

Իսկ աճի համար շնորհակալ եմ
Դարերում թրծված մեր աղաթներին...
Գոհ եմ վերևի մեծ ծանոթներից
Եվ հորն արժանի իմ ժառանգներից:

Ինչո՞ւ իմ ձեռքով քանդեմ իմ տունը,
Երբ որ պալատ է դարձել ծակ բույնը,
Մեծ ամառանոց՝ հենց ծովի ափին,
Կողքիս թիկնապահ՝ հին ծանոթ շունը:

ГАУ РК "Национальная им. И. Ласкинского"

ԱՖՈՐԻԶՄՆԵՐ

* * *

Թշնամիդ ասաց. «Քեզ շատ եմ սիրում»:
Ուրեմն քո դեմ թակարդ է լարում:

* * *

Ինչքան էլ հզոր լինի առյուծը,
Պետք է իմանա՝ ում հետ է գործը:

* * *

Թշնամիդ հանկարծ դարձավ սիրալիր,
Նոր խարդախություն շուտով սպասիր:

* * *

Թշնամիդ ժպտաց իր քթի տակին,
Ուրեմն թակարդ կա ոտքիդ տակին:

* * *

Բոլոր օձերը չէ, որ թունավոր են: Նրանց որոշ տեսակներ նույնիսկ օգտագործվում են սննդի մեջ: Բայց ցավն այն է, որ վնասակարին ու անվնասին իրարից տարբերում ես, երբ խայթում են քեզ:

ГАУРК "Мемориален музей им. Н. Гаспринского"

* * *

Երբ սպանում ես որևէ թշնամու, միշտ պատրաստ եղիր պաշտպանել զավակիդ:

* * *

Արծիվները ծառերի փչակներում բույն չեն դնում: Նրանք ապրում են ժայռերի ծերպերում, որպեսզի ձագերը մանկուց սովորեն բարձունքում ճախրել: Արծիվները որդերով ու ճիճուներով չեն կերակրում իրենց ձագերին, վերջիններս սնվում են որսի թարմ մսով, որպեսզի երբ մեծանան, միշտ արծիվ մնան, այլ ոչ թե՝ լեշակեր անգղ:

* * *

Կատաղած ձիուն սանձելն ավելի հեշտ է, քան համառ էշին համոզելը:

* * *

Պետք չէ ուրիշների հաջողությունները կրկնել, աշխատիր չկրկնել ուրիշների սխալները, այնժամ կհասնես այն նպատակին, որին ձգտում ես:

ГАУ РК "Медиацентр им. М. Горького"

* * *

Հաջողությունը կիսով չափ կախված է մեզանից, մնացածը պատահականություն է:
Մեր անհաջողության պատճառները՝ մեր իսկ թույլ տված սխալներն են, որոնցից օգտվում են մեր հակառակորդները:

* * *

Թե բնությունից է կախված բարիքդ,
Միշտ լավ պահպանիր՝ ինչ ունես տանդ:

* * *

Այն ամենը, ինչ գեղեցիկ է,
Հոգու վրա միշտ ազդեցիկ է,
Բայց ափսո՛ս, որ թափանցիկ չէ,
Ներսում եղածը տեսանելի չէ,
Վաղ լինի, թե ուշ՝ նա անցողիկ է:

* * *

Ասում են, թե գեղեցկությունն է փրկում աշխարհը, բայց պատահել է, որ հենց նա է քանդել աշխարհը:

ГАУЗ "Медицинский им. И.Гаспринского"

* * *

Դեռ չե՞ս հավաքել դու աշնան բերքը՝
Շատ մի շռայլիր տանդ եղածը:

* * *

Կատակը պիտ լինի տեղին,
Որ չկպչի ցավոտ տեղին,
Չես ճանաչում դիմացինիդ՝
Խոսքը պահիր լեզվիդ տակին:

* * *

Մարդ կա՝ ձեռքերում է ուժը,
Մարդ կա՝ ուղեղում է ուժը,
Բայց երկուսը մարդու մեջ
Պատահում են հազվադեպ:

* * *

Մուրացկանին հաց տվեցին,
Նա դժգոհեց քթի տակին.
– Ինչո՞ւ այսքան քիչ տվեցին:
Իսկ ագռավը՝ թառած ճյուղին,
Աչքը հառեց փափուկ հացին,
Խլեց հացը, տվեց թևին:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Կապիկները ծառի վրա են ապահով,
Ճիճուները՝ հողի տակ,
Գազանները՝ անտառներում,
Դավաճանը՝ քթիդ տակ:

* * *

Ամեն մարդու կյանք՝ գիրք չկարդացված,
Ճակատագրի կամքով հնարված,
Մեկը՝ հատորներ, մյուսը՝ մի էջ,
Բայց կան հատորներ՝ կորչում են անդարձ,
Իսկ կյանքի մի էջ ապրում է հավերժ:

* * *

Եթե մուրճ կա քո ձեռքում՝
Մեխ խփելն է քո մտքում,
Բայց աքցանն ես մոռանում:
Թե որ մեխը ծուռ գնա,
Հանելը հեշտ չի լինում:

ГАУ РК "Национальный центр им. Г. Гаспринского"

* * *

Աղքատի որդին միշտ շատ փող աշխատել է երազում, իսկ հարուստի որդին երազում է այն մասին, թե ինչպես փող կորզի ուրիշից:

* * *

Գիտելիքը հարստացնում է մարդու ուղեղը, բայց՝ ի հաշիվ նրա անհոգ օրերի:

* * *

Երբերիտասարդես,տարվումեսերազանքներով, երբ ծերանում ես, երազանքները փոխարինվում են հուշերով:

* * *

Ամեն աղբով մի լցրու ուղեղդ, որպեսզի հետո չփնտրես խելքդ:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՄՈՏԻՎՆԵՐ

Կատակ երգ

Մայրիկին՝ զույգ սապոգներ,
Աղջկան էլ՝ չուլկիներ,
Խեղճ հայրիկին՝ տրեխներ,
Այն էլ չունի տրխատակ.
Դարդ ու բալա է, ցավ ու կրակ է:

Մայրիկը փլավ կուտի,
Աղջիկը՝ սերը կաթի,
Իսկ հայրիկը անոթի՝
Փիփերթ անյուղ, անալի.
Դարդ ու բալա է, ցավ ու կրակ է:

Մայրիկին՝ կինո, թատրոն,
Իսկ աղջկան՝ ինտերնետ,
Իսկ խեղճ հայրիկը անքուն
Մաքրում է գոմ, հավաբուն.
Դարդ ու բալա է, ցավ ու կրակ է:

ГАУ РК "Национальная б-ка им. И. Гаспринского"

Մայրիկին՝ տաք խորոված,
Իսկ աղջկան՝ հավ եփած,
Հայրիկը, ճարը կտրած,
Թերմացքին էլ է պատրաստ.
Դարդ ու բալա է, ցավ ու կրակ է:

Մայրիկը «Նիվա» կուզի,
Իսկ աղջիկը՝ լիմուզին,
Հայրիկի սայլն է շատ հին,
Ձի էլ չունի, որ լծի.
Դարդ ու բալա է, ցավ ու կրակ է:

Մայրիկը գնաց Սևան,
Իսկ աղջիկը՝ Երևան,
Հայրիկը փայտի գնաց,
Որ ձմռանը տաքանան.
Դարդ ու բալա է, ցավ ու կրակ է:

Մայրիկին՝ կրեպդեշին,
Իսկ աղջկան՝ կրեմպլին,
Էժան շալվար հայրիկին,
Գոտի չունի, որ կապի.
Դարդ ու բալա է, ցավ ու կրակ է:

ГАУ РК "Медиатека им. И. Гаспринского"

Մայրիկը՝ պարապ նստած,
Աղջիկը՝ սիրած գրկած,
Հայրիկի շալվարն է ծակ,
Իսկ ծակն էլ՝ ձեռքով ծածկած.
Դարդ ու բալա է, ցավ ու կրակ է:

Այու անեծքը

Հողե՛մ կյլոխտ, ա՛յ փիս հրևան,
Կոզես կարթալ՝ քթի թարգման,
Հիբը վեր կարթիս գիրս աննման,
Յեր-յեր քթչիս բորենու նման:

Հետքտ մեր հողում փիս արազ տեռնա,
Աշկտ քուռանա՝ Շուշին վեչ տեսնա,
Մեր լավ սրերան, հանդ ու չոլերան
Քու ու վեխանրիտ վետը վրանա:

Մեր բաղ ու բախճան բրատու ինի,
Ճերում չլուծվող աղը բոլ ինի,
Շատ դարեր հետո հինչքան էլ քանդին,
Քու թոզտ անգամ հողում վեչ ինի:

ГАУ РК "Медиацентр им. М. Гаспринского"

Տուք մեր հողերը շատ ըք յդտոտալ,
Մեր պարզ ճրերը եկալ, պղտորալ,
Վեր թրեքի պես շատ պիտի քյիրիլ,
Տանել ծեր ծովի ճրերին խառնել:

Ազգիտ անումը օզում չըմ լսեմ,
Անտենան խոզի սալեր քքցիմ,
Վեր «ամա՛ն-ամա՛ն» մուղամ չլսեմ,
Քու տված ցավը մետս չքցիմ:

Դե քյնա հիմա վրդեղ քունն ասես,
Մետտ կքցիս, վեր իմն էլ պատմես,
Կապթող շան նման հինչքան էլ հաչես,
Ըռխետ կտանք, ցավից կկլանչես:

Նիախս զենքավ, զորքավ գյուվանում
Փխճելիս փոխանտ միշտ թաց ա ինում,
Տու Սումգայիթում ու Մարաղայում
Քու պատմությունը արնավ ըս կյուրում:

Ստիպված ռուսի վեննը պչեցիր,
Թա չէ սահմանը Քուռն է, իմացի՛ր,
Արցախը հայ ա, մտքումտ պահի՛ր,
Էլ իզուր տեղը քոնը մի կարծիր:

ГАУ РК "Национальная б-ка им. И. Гаспринского"

Տու քոնիլած մարդուն կացնավ սպանող,
Պառավ մարդկանց ու խոխեք կտորող,
Դժողքի տոռնը կքյնաս սողասող,
Քու մեծ ախպորն էլ տեղ պահի ընդեղ:

Նավթիտ վերերը հավերժ չի մնա,
Կչորանան շուտով, տեղն էլ չի մնա,
Տեղը կածուկ ու սև ղում կմնա,
Իսկ հայը միշտ կա, հայ էլ կմնա:

Տու աղն ու հացը ուրացող շոն ըս,
Եկար քնդեցիր իմ հալալ տոնս,
Իմ անեցքը քեզ ու քո սերունդին
Թող արժան լինի, տու այն կստանաս:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Մեր թացն ու չորը,
Մեր հանդն ու չոլը,
Չենք թողնի ոխե,
Կյուլ տեռած շոնը:

* * *

Մեր պեցիր սարան,
Թքեմ ես քու յրան,
Ցամաք պռոշիտ
Թող վեր կյա յաման:

* * *

Հաչում ա հուռունցանա,
Ըռխեն կտամ, թա մուտանա,
Ազգիդ ծառը թող չուրանա,
Վար մեր հղեն տու մոռանաս:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Կյոլխտ խյար, ուղեղտ լղար,
Լղաճաք տառար, թուղեցիր փախար,
Վեխճարտ մնաց ցամաք չոլերում,
Սրերին յեշի ու երգի՝ ամա՛ն:

* * *

Ճղուպուր, ճղուպուր,
Ծառեն յրա շատ պեցուր,
Սլբանակավ, քարավ տուր,
Թա խիճիճ ա, պիր, ինձ տուր:

* * *

Քաղցր նոռնը՝ թոշը կարմուր,
Մեչը գյուլուլ քանի հարուր,
Տեսքը ասես տոշ ա պիլոր,
Ծառն էլ ջահիլ ախճիգ մաքուր:

ГАУ РК "Медиацентр им. М. Гаспринского"

* * *

Ջբումս պահեմ խնձորը,
Նորից քյնամ մեր ծորը,
Թա վար յարս ինձ մոտ կյա,
Պիրածս տամ, պաչեմ թոշը:

* * *

Մեր հանդերում հարյուր բաղ կա,
Ամեն ծաղկում մաքուր շաղ կա,
Թա սիրածը ուրիշին տան,
Ջահել սրտում թաքուն դաղ կա:

* * *

Հրսանիք ա՝ տաշ ու տուշ,
Հարսնեն անունն ալ՝ Անուշ,
Ջահել փսեն՝ աշկը լուս,
Իսկ չուզողի՝ աշկը փուշ:

ГАУ РК "Медиацентр им. М. Горькинского"

* * *

Թա վար վերթնը մեչան ա,
Ճար ու ճուրը հեչան ա,
Ցավն ու չոռը մոտիկից,
Քեզ թվրում է՝ խաչան ա:

* * *

Գայլին իզուր չասես՝ քուչի՛,
Նա հո շուն չէ՝ իզուր հաչի,
Թե զենք չունե պատահողը,
Լավն են ա, որ թողնի, փախչի:

* * *

Քաղաքում փեչը զազավ են վառում,
Իսկ շենում փեդը էշով են պերում,
Գազը կտրվեց՝ քաղաքում սով ա,
Սաղ ինի էշը՝ խոտով ա ապրում:

ГАУ РК "Медиацентр им. М. Гаспринского"

* * *

Հարը հնձի, մարը փնջի,
Խոխան օտե, մեշկը պնդի:
Ապան նստե, չիբուխ քաշի,
Տատին թիլավ գուլբա նախշի:

* * *

Ղարաբաղի բարբառը,
Հունցը վարար Թարթառը,
Մեր հադերի կեղտերը
Քշի ներքի հանդերը:

* * *

Մեր բարբառի խոսքը բարդ ա,
Տաշվող քար չի ու շատ սարթ ա,
Ղարաբաղցին բարի մարթ ա,
Բայց դուզախա, կողքը հաստ ա:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Ապան մատաղ քեզ, բալես,
Մեր օջախը վառ կանես,
Հազար լեզու էլ գյիդաս,
Մեր հայ լեզուն թարգ չանես:

* * *

Տանս ծառեն թազա ճողնը,
Պարարտ ինի տակե հողը,
Թող պռոկը ցորտ չտանե,
Բարը չոտե շոնն ու կյուլը:

* * *

Ղարաբաղցին անմար պող ա,
Թա փչեցին՝ կրակ ու ծոխ ա,
Միշտ վառ պահե մեր օջախը,
Վեր թշնամին վախից դողա:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Ես քյնացող, տու մնացող,
Կյանքդ ապրես անմնացորդ,
Ոսկու տեղակ գիրք եմ թողնում,
Որ հայերեն կարդա թոռդ:

Մեր շենը

Շենիս անունը Մոխրաթաղ,
Մի դրախտ ա ծռաբաղ,
Տառնամ նորից մի խոխա,
Պեպիգ վազ տամ թաղե-թաղ:

Մեր Ինը մաս եղցին սուրբ ա,
Ապ ու պապի շինած տորք ա,
Հազար անգամ մեզ կտորեն,
Մինն էլ մնա, հաշվի զորք ա:

Մեր Հենգ շենի ճղպրոտը,
Դերուն ծորը, Խաչ խռատը,
Վերը ասեմ, վերը թողեմ,
Սահման չոնե թռչող մետքը:

ГАУ РК "Медиатека им. И. Гаспринского"

Քիշերները նրանց հետ ըմ,
Առավոտը աշկս պանում,
Ղուշու նման ծերքաս թռչում,
Թեփուռներն ա ծեռքիս թողում:

Իմ առաչին ջահիլ սերը,
Աշկից հեռու թաքուն տեղը,
Վար չտեսնան իզուր տեղը,
Շառավ չտան անմեղ տեղը:

Հիմա էլ կա իմ հին շենը,
Թորքի ծեռքավ քանդած տոնս,
Շատ ըմ հեռու, ուժս պակաս,
Բայց այնտեղ է ուշքս, մետքս:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Шуши

Распростёртый на склоне горы
Живёт новой жизнью наш древний Шуши.
Воздвигнув флаг родной над головами,
Низверг он вражеские оковы.

Строил его мой прадед зодчий,
Испокон веков он был армянский.
Ворвались в наш дом султаны и беки,
Как коршуны, на скалы наши сели.

И помнит крепость древняя,
Как армян здесь ставили к стенке,
Стёрли надписи родные наши
И своё что-то написали.

Но всегда карабахцы тверды,
Как всегда, стойкие бойцы,
И всего лишь за два дня битвы
Сбросили лютого врага оковы.

Теперь, отражаясь от стен цитадели,
Из церкви, построенной нашими дедами,
Льётся звон колокола по-армянски,
И зовёт сыновей домой по-отцовски.

ГАУ РК "Национальная библиотека им. М. Расприского"

Эта война

Эта война не закончится,
Пока не виден её конец.
Не победить армянина,
Но и отступить враг не хочет.

Кажется, есть единственный выход –
Чтобы сильные мира вмешались,
Чтобы всех поставили на место
И справедливо вопрос решили.

Но и сильные, в свою очередь,
Заняты, сами бьют друг друга.
Нам остаётся только выстоять
И надеяться на свой ум и оружие.

У нас нет ни нефти, ни золота,
Чтобы дошло до них слово наше,
Остаётся лишь надеяться на Бога,
Если, конечно, сам Бог захочет.

Но надежда – вещь хорошая,
Наше будущее – в наших руках.
Надо так решить этот вопрос,
Чтобы дети не жили без отцов.

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՐՈՏԸ ՍՐՏՈՒՄ 3
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ 12
Կամուրջից այն կողմ 12
Ծովափին 13
Ինչո՞ւ 15
Մի աղբյուր կար 19
Գարնան զեփյուռ 20
Նոր տարի 21
Ձմեռ 23
Հերոս տղաներ 25
Ա՛խ, այդ սեռը 27
Աքսենյային 29
Աշուն 30
Ծերություն 31
Ջարն ու բարին 32
Հանցագործը 33
Արի՛, արի՛… 34
Գրիչ 35
Տարբեր մոտեցում 38
Ամպերին 39
Խաբելու օրը 40
Բակիս ծառերը 42
«Էլ ի՞նչ լեռներ...» 44
Հանուն հավատի 45
Հայե՛ր, հայե՛ր 46
Հարյուր տարի 48
Որոնում 49
Մոխրաթաղ 50
«Եթե մենք մեկին...» 51
Հավատա 52
Անմահություն 53
Սիրո մասին 57
«Բեմից երգում է...» 57
«Լեզուն ասաց...» 58

ГАУ РК "Национальный центр им. М. Горького"

«Թե որ մեկին...» 58
Իմ Ղարաբաղը 59
Կեսօրից հետո 61
Առաջին սերը 63
ՔԱՌՅԱԿՆԵՐ 64
ԱՌԱԿՆԵՐ 85
Ստուգողը 85
Ջրաղացպանը 86
Աղվեսի ֆերման 87
ԱՖՈՐԻԶՄՆԵՐ 89
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՄՈՏԻՎՆԵՐ 95
Կատակ երգ 95
Այու անեծքը 97
«Մեր թացն ու չորը…» 100
«Մեր պեցիր սարան...» 100
«Հաչում ա հուռունցանա...» 100
«Կյոլխտ խյար, ուղեղտ լղար...» 101
«Ճղուպուր, ճղուպուր…» 101
«Քաղցր նոռնը՝ թոշը կարմուր...» 101
«Ջբումս պահեմ խնձորը...» 102
«Մեր հանդերում հարյուր բաղ կա...» 102
«Հրսանիք ա՝ տաշ ու տուշ...» 102
«Թա վար վերթնը մեչան ա...» 103
«Գայլին իզուր չասես՝ քուչի՛...» 103
«Քաղաքում փեչը գազավ են վառում...» 103
«Հարը հնձի, մարը փնջի...» 104
«Ղարաբաղի բարբառը...» 104
«Մեր բարբառի խոսքը բարդ ա...» 104
«Ապան մատաղ քեզ, բալես…» 105
«Տանս ծառեն թազա ճողնը...» 105
«Ղարաբաղցին անմար պող ա...» 105
«Ես քյնացող, տու մնացող...» 106
Մեր շենը 106
Шуши 108
Эта война 109

ГАУ "Национальная библиотека им. И. Гаспринского"

Литературно-художественное издание

Петросян Михаил

ПОСЛЕ ПОЛУДНЯ
(ЗА МОСТОМ)

Стихи

Редактор *Рушан Пилосян*

Подписано в печать 12.12.2018 г. Формат 70x100 $^{1}/_{32}$.
Гарнитура «Times New Roman». Усл. печ. л. 4,55.
Объем 3,5 печ. л. Тираж 500 экз. Зак. № 63381.

ГАУ РК «Медиацентр им. И. Гаспринского»
295048, Республика Крым, г. Симферополь,
ул. Трубаченко, 23-а.
E-mail: mediacenter2015@mail.ru
ОГРН 1159102113455

Отпечатано в типографии ООО «КОНСТАНТА»
308519, Белгородская обл., Белгородский р-н,
п. Северный, ул. Березовая, 1/12.
Тел./факс +7 (4722) 300-720
www.konstanta-print.ru

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"